# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 53 - 54 (16142) ՇԱԲԱԹ, 13 ՀՈՒԼԻՍԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## Բ.ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԱՎԵԼԻ ԿԱՐԵՎՈՐ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԵԼԻ, ՄԱՔՈՒՐ, ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐԱՑԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ Է»

### ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



*Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, առաջիկա նախագահական ընտրությունների կապակցությամբ հանդես է եկել հատուկ հայտարարությամբ:*

«Վրաստանի նախագահը, ի վերջո, նախագահական ընտրությունները նշանակեց հոկտեմբերի 27-ին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդեն ձեռնամուխ է եղել օրենքով նախատեսված միջոցառումների իրականացմանը: Ընտրություններին նախապատրաստվում են նաեւ քաղաքական կուսակցությունները եւ նախագահության թեկնածուները:

Առաջիկա նախագահական ընտրությունները պետք է դառնան երկրում կատարված հիմնարար փոփոխությունների պարզորոշ արտահայտությունը: Մեր քաղաքական թիմն ունի հավակնություն եւ ցանկություն՝ համոզչորեն հաղթել այդ ընտրություններում: Սակայն, մենք ունենք է'լ ավելի կարեւոր հավակնություն եւ ցանկություն՝ Վրաստանում անցկացնել օրինակելիորեն մաքուր,

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ

## ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

*Հուլիսի 10-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Եվրոպական միության ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեին:*



Հանդիպմանը զրուցակիցները երկուստեք գոհունակությամբ են խոսել Հայաստան-ԵՄ հարաբերությունների, այդ հարաբերություններում առանցքային տեղ զբաղեցնող Արեւելյան գործընկերության շրջանակներում համագործակցության եւ Ասոցիացման համաձայնագրի ու դրա մասը կազմող եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու բանակցությունների ընթացքի մասին:

Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ Հայաստանը հաստատակամ է շարունակելու եւ նոր թափ հաղորդելու մի շարք ուղղություններով երկրում իրականացվող լայնածավալ բարեփոխումներին՝ ակնկալելով դրանց իրագործմանը ցուցաբերվող աջակցության ընդլայնում:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ

*Բաթումիում աշխատանքն սկսեց «ԵՄ Արեւելաեվրոպական գործընկերները՝ Արեւելյան գործընկերության Վիլնյուսի գագաթաժողովում»՝ տասներորդ, ոոբելյանական միջազգային խորհրդաժողովը: Խորհրդաժողովին մասնակցում են Վրաստանի եւ ԵՄ անդամ երկրների, գործընկեր երկրների բարձրաստիճան անձինք, ոչ կառավարական կազմակերպությունների եւ բիզնես-հատվածի ներկայացուցիչներ:*

Բացելով միջազգային խորհրդաժողովը՝ Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ Եվրամիությանն ինտեգրվելուց բացի, Վրաստանն այլ ընտրանք չունի:

«Զարգացման եվրոպական ուղին ընտրել է ամբողջ վրաց ժողովուրդը, եւ դա որեւէ մի քաղաքական ուժի ընտրանք չէ: Վրաստանը եվրոպական երկիր է եւ ցանկանում է դառնալ Եվրոպայի մի մասը: Այլընտրանք չկա»,- ասաց նա:

Իվանիշվիլին ընդգծեց, որ ընտ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ՝ ԿԻՆՈԱՐՎԵՍՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ

*Երեւանում տեղի է ունեցել Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարի տեղակալ Բադրի Բագրատիոնու գլխավորած պատվիրակության հանդիպումը Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի հետ:*



Հանդիպման ընթացքում, քննարկվել են երկկողմ համագործակցության հարցեր, ինչպես նաեւ 2013թ. մարտի 20-22-ը Հայաստանի մշակույթի նախարարի՝ Վրաստան կատարած այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը:

Զրույցի ընթացքում, կողմերն արձանագրել են գրականության ու կինոարվեստի բնագավառներում գործուն համագործակցության շարունակականությունը եւ նշել Հայաստանում անցկացված Պոեզիայի առաջին միջազգային փառատոնին վրաց բանաստեղծների մասնակցությունը, իսկ «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի շրջանակներում կայանալիք վրացական կինոյի օրեր (ներկայացվելու է 7 ֆիլմ)

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՇԱՀԱԳՐԳՌՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԿՈՀԱԲԻՏԱՑԻԱՅԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

*Թբիլիսիում Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու հետ համատեղ մամլո ասուլիսում, ԵՄ ընդլայնման գծով եվրահանձնակատար Շտեֆան Ֆյուլեն հայտարարել է, որ եվրամիությունը կարեւոր դեր է հատկացնում քաղաքական ուժերի կոհաբիտացիայի գործընթացին:*



Նա նշել է, որ ԵՄ Վիլնյուսի գագաթաժողովում Վրաստանը կարող է ստանալ նոր ազդակ եվրամիության հետ հարաբերություններում, եւ հավելել, որ Վրաստանի նախագահի հետ հանդիպման ընթացքում հանգամանորեն քննարկվեցին ԵՄ-Վրաստան հարաբերությունները:

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին Բաթումիում, ԵՄ ընդլայնման եվրահանձնակատար Շտեֆան Ֆյուլեի հետ հանդիպումից հետո, հայտարարել է, որ Վիլնյուսի գագաթաժողովը պատմական կլինի:

Իվանիշվիլին, անդրադառնալով նախագահական ընտրություններին, համոզվածություն, որ դրանք կլինեն առավել ժողովրդավարական, ազատ:

Շտեֆան Ֆյուլեն ողջունել է վարչապետի հայտարարությունը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԴՅՈՒՐԱՑՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑ՝ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

*Անձինք, ովքեր Վրաստանի քաղաքացիությունից զրկվել են այլ պետության քաղաքացիություն ստանալու պատճառով, կարող են այն վերադարձնել դյուրացված գործընթացի միջոցով:*

Այդ մասին հայտարարել է վրացական պետության ղեկավարի մամուլի խոսնակ Մանանա Մանջգալաձեն, հուլիսի 11-ին կայացած ճեպազրույցի ժամանակ:

Ըստ Մանջգալաձեի տվյալների, Վրաստանի նախագահի վարչակազմն արդարադատության նախարարության պետական ծառայությունների զարգացման գործակալությունից տեղեկատվություն է ստացել առ այն, որ Վրաստանի ավելի քան 10 հազար քաղաքացի ստացել է այլ երկրի քաղաքացիություն՝ այդ մասին չծանուցելով համապատասխան մարմիններին: Դա հիմք է դարձել նրանց քաղաքացիությունից զրկելու համար:

«Այդ քաղաքացիները կարող են քաղաքացիություն ստանալու համար դիմել նախագահին, արդարադատության նախարարության համապատասխան մարմիններին՝ Արդարադատության տուն եւ պետական ծառայությունների զարգացման գործակալություն կամ Վրաստանի հյուպատոսարան»,- ասել է Մանջգալաձեն:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԿԸՀ-Ն ՍԿՍԵԼ Է ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

*Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցել է Վրաստանի նախագահության առաջին յոթ թեկնածուներին:*

Նախաձեռնող խմբերը ներկայացրել են՝ Միխեիլ Սալուաշվիլուն, Տարիել Խվեդելիձեին, Նեստան Կիրտաձեին, Գիորգի Գախոկիային, Մամուկա Չոխոնելիձեին, Նիկոլոզ Գոգիջանիձեին: Լեյբորիստական կուսակցությունը ներկայացրել է այդ կուսակցության ղեկավար Շալվա Նաթելաշվիլուն:

Դեռեւս դիմումներ չեն ստացվել «Ժողովրդավարական շարժման» ղեկավար Նինո Բուրջանաձեից, կառավարող կուսակցությունից թեկ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րությունների միջոցով իշխանության գլուխ կանգնած նոր կառավարությունը մտադիր է կառուցել եվրոպական տիպի ակտիվ ժողովրդավարական հասարակություն: Նա նշեց, որ իր կառավարությունը կապահովի խոսքի իսկական ազատություն, ազատ դատարան, ազատ ԶԼՄ-ներ:

Վրաստանի վարչապետը Եվրոպային խոստացավ անցկացնել ամենաազատ նախագահական ընտրությունները Վրաստանի պատմության մեջ՝ հավելելով, որ Վրաստանում կպաշտպանվեն բոլոր փոքրամասնությունների, այդ թվում՝ սեքս-փոքրամասնության իրավունքները: Իվանիշվիլին Եվրամիությանն առանձնապես երախտագետ եղավ եվրոպական գործընկերության հաստատություն ստեղծելու, Վրաստանի տարածքային ամբողջականությունը, նրա ինքնիշխանությունը պաշտպանելու համար: Նա նշեց, որ Վրաստանն սկսել է հաջող երկխոսություն Ռուսաստանի հետ, սակայն այդ երկխոսությունում չի հրաժարվում ԱՄՆ-ի եւ Եվրոպայի միջնորդությունից:




Բաթումիում Եվրահանձնակատար Շտեֆան Ֆյուլեն հայտարարեց, որ երկու նպատակներ՝ Վրաստանի հաջողությունը Վիլնյուսի գագաթաժողովում եւ պայքարն անցյալի ժառանգության դեմ, չպետք է հակասեն միմյանց:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԿԸՀ-Ն ՍԿՍԵԼ Է ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նածու Գիորգի Մարգվելաշվիլուց, որ արդեն սկսել են նախընտրական քարոզարշավը: Սպասվում է, որ «Ազգային շարժումը» կներկայացնի Դավիթ Բաքրաձեին, ոչ կառավարական ընդդիմությունը՝ երգիչ Պաատա Բուրճուլաձեին, նախկին արտգործնախարար Սալոմե Զուրաբիշվիլուն: Մինչեւ սեպտեմբերի 17-ը նախագահության թեկնածուները պետք է ներկայացնեն իրենց կողմնակիցների 26 հազար ստորագրություն:

# ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ՝ ՆՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ




***Նախագահական ընտրությունների ժամկետի պաշտոնական հայտարարման կապակցությամբ, որը հոկտեմբերի 27-ն է, հեռուստաընկերությունները պարտավոր են հետեւել Must Carry սկզբունքին:***

Անցյալ տարի, Վրաստանի Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն, ընտրությունների ժամկետը նշանակելու մասին Վրաստանի նախագահի որոշման կիրարկման պահից եւ մինչեւ ընտրությունների օրը, հեռարձակման իրավունք ստացած անձը (կաբելային ընկերություն), պարտավոր է բաժանորդներին առաջարկվող՝ Հանրային հեռուստատեսության փաթեթում տեղադրել նաեւ լիցենզավորված ընդհանուր հեռուստաընկերություններին, որոնց հեռուստահաղորդման գոտում կաբելային ընկերությունն ունի իր բաժանորդները:

Այն դեպքում, եթե հեռուստահաղորդողը եթեր է դուրս գալիս արբանյակի միջոցով, նրա հաղորդման գոտի համարվում է ամբողջ Վրաստանը: Հետեւաբար, բոլոր կաբելային ընկերությունները պարտավոր են իրականացնել այդ հեռուստաալիքների հաղորդումը:

Կաբելային ընկերությունները պարտավոր են Must Carry սկզբունքն իրականացնել ընտրությունների ժամկետը նշանակելու մասին Վրաստանի նախագահի որոշման կիրարկման պահից՝ երեք օրվա ընթացքում:

# ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԿԱԶՄՈՒՄ Է 3 537 249 ՄԱՐԴ

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆՎԵԼ Է 97 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

***2013 թվականի նախագահական ընտրությունների համար գրանցված ընտրողների թիվը Վրաստանում կազմել է 3 537 249 մարդ: Ըստ ընտրատարածքների ընտրողների թվակազմի մասին տեղեկատվությունը հրապարակել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:***

Վրաստանի մասշտաբով, առկա է 84 ընտրատարածք, որից 10-ը՝ Թբիլիսիում: Մայրաքաղաքում ամենամեծ թվով ընտրողներ հաշվեգրվել են Սամգորիի ընտրատարածքում՝ 140 304, ամենաքիչը Կրծանիսիի ընտրատարածքում՝ 43 831:

Ամբողջ երկրի առումով, առավել թվով ընտրողներ հաշվեգրվել են Քութայիսիի ընտրատարածքում՝ 158 502, իսկ ամենաքիչը՝ Ղազբեգիի շրջանում՝ 5776:

Շուրջ 97 հազար ընտրող հանվել է հաշվեգրումից, ուստի չեն կարող մասնակցել 2013 թվականի հոկտեմբերի 27-ի նախագահական ընտրություններին: Դրանք այն ընտրողներն են, որոնց համար տարբեր պատճառներով վերացվել էր գրանցումը կոնկրետ հասցեում: 2012 թվականի հոկտեմբերի 1-ին կայացած խորհրդարանական ընտրություններում եւ 2013 թվականի ապրիլի 27-ի միջակա խորհրդարանական ընտրություններում նրանց չէր ընձեռվել գրանցման վերջին վայրում քվեարկությանը մասնակցելու հնարավորություն:

Սույն հարցի դրական լուծման համար, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում քվեարկեց միայն հանձնաժողովի յոթ անդամ, իսկ ըստ կանոնակարգի, որոշում ընդունելու համար անհրաժեշտ է ձայների 2/3-ը, այսինքն՝ 9 ձայն: Այդպիսով, 97 000 ընտրող, այդ թվում՝ 70 000-ը Թբիլիսիում, չի կարողանա մասնակցել նախագահական ընտրություններին:

# ՊՐԱՅՄԵՐԻԶ. ԴԱՎԻԹ ԲԱՔՐԱՁԵԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՂԹԱՆԱԿԸ

***Խորհրդարանական փոքրամասնության ղեկավար Դավիթ Բաքրաձեն Գորիում հաղթել է ներկուսակցական ընտրությունների երկրորդ փուլում, որ անցկացվում են նախագահության թեկնածուին բացահայտելու համար:***

Գաղտնի քվեարկության արդյունքում, պատգամավորների մեծ մասը քվեարկել է հօգուտ խորհրդարանի նախկին խոսնակի: Բացի Բաքրաձեից, «Ազգային շարժման» պրայմերիզին մասնակցում են պատգամավորներ՝ նախկին փոխվարչապետ Գիորգի Բարամիձեն, նաեւ Զուրաբ Ջափարիձեն ու Շոթա Մալաշխիան:

«Բանավեճերը եղան շատ բովանդակալից եւ հետաքրքիր, քանի որ մենք խոսում էինք այն թեմաների շուրջ, որ խիստ կարեւոր են մեր երկրի համար, այն է՝ առողջապահություն, սոցիալական հարցեր, գյուղատնտեսություն: Բոլոր թեկնածուները ներկայացրին տարբեր եւ լավ հիմնավորված տեսակետներ: Կարծում եմ, որ տվյալ փուլում հաղթանակը եղավ հաղթանակ արժանավայել մրցակիցների նկատմամբ»,- հայտարարել է Բաքրաձեն:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ՝ ԿԻՆՈԱՐՎԵՍՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ «Միմինոյի հերոսների հետքերով» ծրագրերին՝ անվանի վրաց կինոռեժիսորների ու դերասանների մասնակցությունը:

Համմիկ Պողոսյանը տեղեկացրել է հյուրերին, որ 2013թ. հունիսի 21-ին Հայաստան էր ժամանել Վրաստանի կոմպոզիտորների միության պատվիրակությունը: Այցի ընթացքում, Հայկական երաժշտական ասամբլեայի եւ Վրաստանի կոմպոզիտորների միության միջեւ ստորագրվել է համագործակցության մասին համաձայնագիր, իսկ Արամ Խաչատրյանի տուն թանգարանում կայացել է համերգ:

Հանդիպման ընթացքում, կողմերն անդրադարձել են հուշարձանների պահպանության եւ վերականգնման ոլորտում համագործակցության խնդիրներին ու վերահաստատել իրենց համաձայնությունը՝ այս ասպարեզում համագործակցությունը ծավալել «Եվրոպական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիայի շրջանակներում: Խոսվել է նաեւ թատերարվեստի ոլորտում պայմանավորվածությունների կատարման ընթացքի մասին եւ նշվել, որ Գյումրիի ու Թբիլիսիի Մարջանիշվիլու անվան թատրոնները բանակցում են փոխադարձ հյուրախաղերի շուրջ: Բացի այդ, 2014թ. Մարջանիշվիլու անվան թատրոնը կմասնակցի Շեքսպիրյան փառատոնին:

Կողմերը պայմանավորվել են ակտիվացնել համագործակցությունը կերպարվեստի, ժամանակակից արվեստի ոլորտներում եւս: Որոշվել է կազմակերպել մտավորականների միջսահմանային հանդիպումներ, որտեղ կհանդիպեն թե' ավագ եւ թե' երիտասարդ սերնդի ներկայացուցիչները, կկայանան բացօթյա զրույցներ ու քննարկումներ: Այնուհետեւ, վրացական կողմը հրավիրել է երիտասարդ հայ արվեստագետներին մասնակցելու Վրաստանում, մասնավորապես՝ Բաթումիում կայանալիք ժամանակակից արվեստի փառատոնին:

Հանդիպմանը կողմերն անդրադարձել են նաեւ այն պայմանավորվածություններին, որոնց ընթացքը դանդաղում է. մասնավորապես՝ «Երեւան-Թբիլիսի տրանզիտ» երաժշտական նախագծին, Ջիվան Գասպարյանի եւ ջազ-համերգին, երկու երկրների թանգարանների միջեւ համագործակցության ակտիվացմանը:

Վրաստանի մշակույթի նախարարի տեղակալ Բադրի Բագրատիոնին Համմիկ Պողոսյանին տեղեկացրել է, որ այցելել են Սերգեյ Փարաջանովի թանգարան, որտեղ Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարի խորհրդական Գիորգի Գեգեչկորին իր կողմից արված Փարաջանովի նկարը, «Նռան գույնը» ֆիլմի օրինակը եւ Փիրոսմանիի նամակը Փարաջանովին նվիրել է թանգարանին:



ԱՄՆ

### ՆՎԱԶԵՑՎՈՒՄ Է ԲՅՈՒՋԻ ԴԵՖԻՑԻՏԸ

*Սպիտակ տունն ընթացիկ ֆինանսական տարում ԱՄՆ-ի համերկրային բյուջեի դեֆիցիտի կրճատում է կանխատեսում մինչեւ 759 մլրդ դոլար:*

*Հուլիսի 8-ին հայտարարված տվյալները 200 մլրդ դոլարով պակաս են մի քանի ամիս առաջ Բարաք Օբամայի վարչակազմի նշած ցուցանիշից: Նոր թվերը, մասնավորապես, արտացոլում են երկրի տնտեսական սեկտորի իրադրության բարելավումը:*

*Ընթացիկ ֆինանսական տարին, որն ավարտվում է սեպտեմբերի 30-ին, կարող է դառնալ Օբամայի նախագահության առաջին տարին, երբ դեֆիցիտը չի գերազանցի 1 տրլն դոլարը: 2012 թվականին այդ ցուցանիշը կազմել է 1,1 տրլն դոլար. ամենաբարձր՝ 1,4 տրլն դոլար, ցուցանիշն արձանագրվել է 2009 թվականին:*

ԼԻԲԱՆԱՆ

### ՊԱՅԹՅՈՒՆ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ

*53 մարդ է վիրավորվել Լիբանանի մայրաքաղաքի Բիր ալ Աբիդյե արվարձանում իրականացված պայթյունի հետեւանքով:*

*Առողջապահության նախարարության տվյալներով, 41 մարդ թեթեւ վերքեր է ստացել, իսկ 12-ը տեղափոխվել են հիվանդանոց:*

*Պայթյունը տեղի է ունեցել կայանատեղիում, եւս առնվազն տասը ավտոմեքենա բռնկվել է: Տեղական իշխանությունները տեղի ունեցածը գնահատել են ահաբեկչական գործողություն:*

*Տեղական իրավապահ մարմինների անանուն աղբյուրը ենթադրել է, որ պայթյունի հետեւում կանգնած են «Ջեբհաթ ան Նուսրա» խմբավորման ծայրահեղականները, որոնք Սիրիայում կռվում են խռովարարների կողմում:*

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

### ԼԱՏՎԻԱՆ ՄԻԱՆՈՒՄ Է ԵՎՐԱԳՈՏՈՒՆ

*Եվրամիության խորհուրդը էկոնոմիկայի եւ ֆինանսների նախարարների (ԷԿՈՖԻՆ) մակարդակով հուլիսի 9-ին կայացած հերթական նիստի ժամանակ, վերջնական որոշում է ընդունել 2014 թվականի հունվարի 1-ից Լատվիայում միասնական եվրոպական արժույթ սահմանելու մասին:*

*Լատվիայի իշխանություններն այն կարծիքին են, որ 2014 թվականի հունվարի 1-ից եվրոյի գոտուն Լատվիայի միանալը զարգացման նոր հնարավորություններ կտա երկրին:*

*Մինչդեռ երկրի բնակչության մեծամասնությունը՝ 53 տոկոսը, հանդես է գալիս միասնական եվրոպական արժույթի սահմանման դեմ: Եվ միայն 22 տոկոսն է պաշտպանում եվրոյի գոտուն երկրի անդամագրվելը:*

ԵԳԻՊՏՈՍ

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՓԵՏՐՎԱՐԻՆ

*Եգիպտոսի ժամանակավոր նախագահ Ադլի Մանսուրը հրամանագիր է հրապարակել, որով սահմանվում են նոր նախագահական ու խորհրդարանական ընտրությունների անցկացման ժամկետները:*

*Փաստաթղթի համաձայն, 15 օրվա ընթացքում կիրավիրվի Սահմանադրական ժողով, որը կզբաղվի երկրի հիմնական օրենքում փոփոխությունների նախապատրաստմամբ: Այնուհետեւ, այդ փոփոխություններին պետք է հավանություն տրվի հանրաքվեում, որն անհրաժեշտ է անցկացնել չորս ամսվա ընթացքում: Դրանից հետո, եկող տարվա փետրվարին, Եգիպտոսում պետք է կայանան խորհրդարանական ընտրություններ: Նշենք, որ նախկին նախագահ Մուրսիի կողմնակիցների եւ բանակային միավորումների միջեւ ընդհարումները շարունակվում են: Վերջին մեկ շաբաթվա ընթացքում ընդհարումներին զոհ է գնացել առնվազն 51 մարդ: Շուրջ 300-ը վիրավորվել է:*

*Եվ միայն այն բանից հետո, երբ երկրում կհայտնվի լիարժեք գործող խորհրդարան, կհայտարարվի նախագահական ընտրությունների մասին:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ



*Վրաստանի արդարադատության նախարարությունը Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում անցկացրեց հակախտրական օրինագծի շնորհանդես:*

Եթե օրենսդրական նախաձեռնությունը դառնա օրենք, նա կկարողանա պաշտպանել բոլորին՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվական պատկանելությունից, սեռից, տարիքից, քաղաքացիությունից, սոցիալական ծագումից, բնակության վայրից, դավանանքից եւ այլն: Օրինագիծը լիովին համապատասխանում է եվրոպական ստանդարտներին եւ հենվում է խտրականության արգելման մասին Սահմանադրության պահանջի վրա:

Վրաստանի արդարադատության նախարարությունը իր մշակած հակախտրական օրինագիծը ներկայացրեց էթնիկական եւ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

Օրինագծի շնորհանդեսի ժամանակ նշվեց, որ այսօրվա դրությամբ վրացական օրենսդրության այն նորմերը, որ արգելում են խտրականությունը, ցրված են տարբեր թեմատիկ նորմատիվ ակտերում, ինչը սահմանափակում է դրանց տեղեկատվական մատչելիությունը, իսկ մյուս կողմից՝ այդ նորմերը չունեն իրացման համապատասխան մեխանիզմներ:

Հանդիպմանը առանձնակի հետաքրքրություն հարուցեցին «իրավահավասարության տեսուչ» հասկացությունը եւ նրա գործառույթները: Օրինագծի համաձայն, իրավահավասարության տեսուչի պարտականությունների մեջ մտնում են՝ ստացած դիմումների եւ գանգատների քննարկումը, օրենսդրական առաջարկությունների մշակումը, իրավիճակի մոնիտորինգը խտրականության տեսակետից, հասարակական ինքնագիտակցության բարձրացումը եւ այլն: Իրավահավասարության տեսուչին կընտրի խորհրդարանը:

Միջոցառմանը արդարադատության նախարարության ներկայացուցիչները ունկնդրեցին ազգային եւ կրոնական փոքրամասնությունների առաջարկություններն ու դիտողությունները օրինագծի առնչությամբ:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ



*Հուլիսի 7-8-ը Թբիլիսիում, Եվրոպային ինտեգրման կոմիտեի եւ «Ըստ եվրոպական ժամանակի» ասոցիացիայի նախաձեռնությամբ, անցկացվեց «Հարավային Կովկասի խորհրդարանական համագործակցության» երկրորդ փուլը:*

Ինչպես նշել են խորհրդարանից, միջոցառման նպատակը Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանների պետական ծառայողների մերձեցումն ու նրանց գիտելիքների մակարդակի բարձրացումն է:

«Հարավային Կովկասի խորհրդարանական համագործակցության» երկրորդ փուլը բացեցին եվրոպային ինտեգրման կոմիտեի նախագահ Վիկտոր Դոլիձեն, եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման պետական նախարար Ալեքսեյ Պետրիաշվիլին, Վրաստանում Եվրամիության դեսպան Ֆիլիպ Դիմիտրովը, «Ըստ եվրոպական ժամանակի» ասոցիացիայի նախագահ Եկատերինե Քարդավան եւ Հարավային Կովկասում Ադենաուերի հիմնադրամի ներկայացուցիչը:

Երկօրյա միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի խորհրդարանի Եվրոպային ինտեգրման եւ արտաքին հարաբերությունների կոմիտեների աշխատակիցները, Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանների յոթ պետական ծառայողներ, փորձագետներ, Վրաստանի Գործատուների ասոցիացիայի եւ Սպառողների ֆեդերացիայի նախագահները:

SCPC-ն անցկացվեց երկրորդ անգամ: Միջոցառմանն աջակցեց Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի Հարավային Կովկասի տարածքային ներկայացուցչության վրացական գրասենյակը:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

## ՎԱՂ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

*Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցում անցկացվեց խորհրդաժողով, որի թեման էր «Վաղ ամուսնության կանխումը՝ գենդերային իրավահավասարությանը եւ վերականգնողական առողջությանը աջակցելու նպատակով»:*

ՄԱԿ-ի Բնակչության ֆոնդի վրացական գրասենյակի ղեկավար Թամար Խոմասուրիձեն հայտարարել է, որ հուլիսի 11-ը բնակչության համաշխարհային օրն է, եւ այս տարի այն նվիրված է դեռահասների հղիության հարցին: Նա ասել է, որ աշխարհում ամեն տարի ծննդաբերում է 15-ից մինչեւ 19 տարեկան 16 միլիոն աղջիկ: Ծննդաբերությունն ուղեկցող բարդությունները հանդիսանում են մահացության հիմնական պատճառ: Դեռահասների հղիությունը ոչ միայն առողջության հիմնախնդիր է, այլեւ վերաբերում է զարգացման հարցերին»,- նշել է Խոմասուրիձեն:

Նրա խոսքերով, այդ տեսակետից Վրաստանում առկա է առանձնապես տագնապալից իրավիճակ: Արեւելյան Եվրոպայի երկրների թվում, վաղ ամուսնության առումով, Վրաստանը զբաղեցնում է երկրորդ տեղը: Խորհրդաժողովում ուշադրություն բեւեռվեց տվյալ հիմնախնդիրների լուծման ուղիներին:

Ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին հայտարարել է, որ Վրաստանում լուրջ հիմնախնդիրներ կան վաղ ամուսնությունների եւ վաղ հղիության առնչությամբ, եւ մոտ 7 հազար դեռահաս չի ավարտում կրթությունը:

ՔՐԵԱԿԱՆ

## ԿՐՃԱՏՎԵԼ Է ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ



*Վրաստանի ՆԳ նախարարության ներկայացրած վիճակագրության համաձայն, 2013 թվականի առաջին կիսամյակում գրանցվել է 14 128 հանցագործություն, որից հայտնաբերվել է 7243-ը: Հանցագործությունները նվազել են 3277 միավորով:*

Հանցագործության հայտնաբերման աճը կազմել է 26,8 տոկոս: 2012 թվականի համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշները հետեւյալն են. գրանցված հանցագործությունների ընդհանուր քանակը՝ 17485, հայտնաբերումը՝ 4271:

Մասնավորապես, Թբիլիսիում 2018 թվականի առաջին կիսամյակում գրանցվել է 7744 հանցագործություն, հայտնաբերումը՝ 1925, հայտնաբերման ցուցանիշը՝ 24,9 տոկոս: 2013 թվականի առաջին կիսամյակում գրանցվել է 7032, հայտնաբերվել՝ 25,06, հայտնաբերման տոկոսը՝ 35,6: Հանցագործությունները նվազել են 712 միավորով:

Աջարիա. 2012 թվականին գրանցվել է 1387, հայտնաբերվել՝ 2,18: Հայտնաբերման ցուցանիշը՝ 15,7 տոկոս, 2013 թվականին գրանցվել է 1282, հայտնաբերվել՝ 771, հայտնաբերման ցուցանիշը 60,1 տոկոս: Հանցագործությունները կրճատվել են 105 միավորով:

Քվեմո Քարթլի. 2012 թվականին գրանցվել է 2157, հայտնաբերումը՝ 715: Հայտնաբերման ցուցանիշը՝ 14,6 տոկոս: 2013-ին գրանցվել է 894, հայտնաբերվել՝ 503, հայտնաբերման ցուցանիշը՝ 56,3 տոկոս: Հանցագործությունները կրճատվել են 1843 միավորով:

Սամցխե-Ջավախեթի. 2012 թվականին գրանցվել է 247, հայտնաբերվել՝ 160, հայտնաբերման ցուցանիշը՝ 64,8 տոկոս: 2013-ին գրանցվել է 338, հայտնաբերվել՝ 160: Հայտնաբերման ցուցանիշը՝ 64,8 տոկոս: 2013 թվականին գրանցվել է 338, հայտնաբերվել՝ 296, հայտնաբերման ցուցանիշը՝ 74,4 տոկոս: Հանցագործություններն ավելացել են 151 միավորով:

## ՀԱՍՑՐԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱ՞Ն

*Հուլիսի լույս 9-ի գիշերը շարունակվեց ինքնասպանություն կատարած Մամուկա Միքաուտաձեի կնոջ՝ Զիզի էձգվերաձեի հարցաքննությունը: Հարցաքննությանը ներկա էին Վրաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ներկայացուցիչները:*

Միքաուտաձեի մահվան վերաբերյալ գործը հարուցվել է «մինչեւ ինքնասպանության հասցնելը» հոդվածով:

Էձգվերաձեն քննիչներին պատմել է ամուսնու վերջին զանգերի մասին, որ նա կատարել է ինքնասպանությունից քիչ առաջ: Մամուկան խոսել է այն մասին, որ իրավապահներն իրեն հարկադրել են ստորագրել ցուցումներ իր մտերիմի դեմ, եւ ինքն այդ պատճառով չի կարող ապրել:

Ավելի ուշ, Միքաուտաձեին գտել էին Թբիլիսիի ծովի ափին, կախված:

Կինը գտնում է, որ նա ենթարկվել էր ֆիզիկական եւ հոգեբանական ճնշման ոստիկանության կողմից, քանի որ նրանից պահանջում էին ցուցումներ տալ մտերիմ մարդու դեմ, որը մեղադրվում էր թմրանյութեր տարածելու մեջ:

Քննիչները ինքնասպանի հագուստը վերցրել են փորձագիտության համար: Նրանք նաեւ զննել են հանգուցյալի մարմինը:



### ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ

*Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին Քիշնեւում մասնակցեց Արեւելյան գործընկերության երկրների ղեկավարների, Եվրոպայի ժողովրդական կուսակցության երրորդ գագաթաժողովի անդրանիկ աշխատանքային նստաշրջանին: Քննարկվեցին Վիլնյուսի գագաթաժողովի օրակարգի հարցերը:*

*Անդրադարձ եղավ նաեւ ընդհանուր արժեքներին եւ ժողովրդավարական բարեփոխումներին, որոնք էլ ավելի կմերձեցնեն Արեւելյան գործընկերության երկրներին եւ Եվրոպային:*

### ՎԱՐՉԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՌԱՄԱԶԱՆԻ ԱՌԹԻՎ

*Վարչապետ Բիձինա Իվանիշվիլին Վրաստանի մուսուլմաններին շնորհավորել է Ռամազան տոնի առթիվ:*

*«Մեր համաքաղաքացի մուսուլմաններին շնորհավորում եմ Ռամազան սուրբ տոնի առթիվ: Ցանկանում եմ միանալ այդ մեծ տոնին եւ հաղորդակից դառնալ այդ ուրախությանը: Վրաստանում ապրող բոլոր մուսուլմաններին մաղթում եմ հոգեւոր հանգստություն, առողջություն, երջանկություն, մշտական առաջընթաց եւ համատեղ բնակություն միասնական եւ ուժեղ Վրաստանում, որը մեր բոլոր քաղաքացիների հայրենիքն է: Բոլորին շնորհավորում եմ Ռամազանի առթիվ»,- ասվում է Վրաստանի վարչապետի շնորհավորանքում:*

### ՌԱԲԱԹ ԲԵՐԴԸ ԿԱՆՎԱՆԵՆ ԱԽԱԼՑԻԽԵԻ ԲԵՐԴ

*Ախալցիխեի տուրիստական լրատվական կենտրոնը դիմել է տուր-օպերատորներին՝ Ռաբաթ բերդն անվանել է Ախալցիխեի բերդ: «Մենք ցանկանում ենք, որպեսզի բոլոր տուրիստական ընկերությունները Ռաբաթ բերդն անվանեն Ախալցիխեի բերդ»,- ասել է վերոնշյալ կենտրոնի աշխատակիցը:*

### ԿԵՆՍԱԹՈՇԱԿ՝ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

*Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների ընտանիքները կստանան 500 լարի գումարով կենսաթոշակ, իսկ 2015 թվականից՝ 1000 լարի: Այս մասին խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի նիստում հայտարարեց կոմիտեի նախագահ Իրակլի Սեսիաշվիլին:*

*«Միջազգային առաքելություններում զոհված զինվորականների ընտանիքները, որպես միանվագ օգնություն, կստանան 100 հազար լարի: Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների ընտանիքները 2014 թվականից կստանան 500 լարի կենսաթոշակ, իսկ 2015 թվականից՝ 1000 լարի: Այդ նպատակներով կառավարությունը կհատկացնի ավելի քան 24 միլիոն լարի»,- նշել է Իրակլի Սեսիաշվիլին:*

### ԿԱՍՊԻ. ՊԱՇՏՈՆԱԹՈՂ Է ԵՂԵԼ ԴԱՎԻԹ ՄԵՍՐՈՓԱՇՎԻԼԻՆ

*Կասպիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Դավիթ Մեսրոփաշվիլին պաշտոնաթողության դիմում է ներկայացրել: Հուլիսի 10-ին կայացած սակրեբուլոյի բյուրոյի նիստում Մեսրոփաշվիլին իր այդ քայլը բացատրել է նրանով, որ մինչ այդ, իրեն բազում մեղադրանքներ էին ներկայացրել, թեպետ դրանցից ոչ մեկը չհաստատվեց, իսկ այսօր, «երբ բոլոր հարցերը հստակեցվել են, դիմումը գրելու ամենահարմար ժամանակն է»:*

*Նշենք, որ մոտ օրերս կանցկացվի սակրեբուլոյի արտահերթ նիստ, որի ընթացքում էլ կընտրվի սակրեբուլոյի նոր նախագահը:*

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

# Բ.ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԱՎԵԼԻ ԿԱՐԵՎՈՐ ՃԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԵԼԻ, ՄԱՔՈՒՐ, ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐԱՑԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ազատ եւ արդարացի ընտրություններ, այնպիսի ընտրություններ, որ արժանավայել են Եվրոպա ձգտող երկրին: Հենց դա կլինի մեր ընդհանուր հաղթանակը եւ ժողովրդավարական քաղաքական կարգի արմատավորումը երկրում:

Վրաստանում պետք է վերջ դրվի այն ամոթալի քաղաքականությանը, երբ կառավարող թիմը բոլոր պետական ռեսուրսները նպատակամղում էր քաղաքական ընդդիմադիրների դեմ եւ խանգարում քաղաքացիների կամքի ազատ դրսեւորմանը: Մեր կառավարությունը բոլոր քաղաքացիների եւ նախագահության բոլոր թեկնածուների կառավարությունն է: Ուստի, կառավարական եւ վարչական համակարգը՝ լինի դա բյուջետային միջոցներ, ոստիկանություն, թե այլ հանրային հիմնարկներ, ուղղված կլինեն արդարացի եւ ազատ ընտրական միջավայրի ապահովմանը, այլ ոչ թե որեւէ թեկնածուի հաղթանակին:

Դիմում եմ «Վրացական երազանք» կոալիցիայում միավորված եւ մյուս քաղաքական ուժերին, որ եղել են պետական աստիճանի բարձրացված անարդարության ու բռնության զոհեր. այս նախընտրական քարոզարշավի ընթացքում ապացուցենք, որ վրեժը մեր սկզբունքը չէ: Ահա մեր սկզբունքը՝ ազատություն, օրենքի գերակայություն եւ ընդդիմադրի հարգում: Հակառակ դեպքում, եթե մենք նման ձեւով վերաբերվենք նախկին իշխանությունների ներկայացուցիչներին, ինչպես նրանք էին վերաբերվում մեզ, ապա մենք կընթանանք այն փակ շրջագծով, որից մենք չէինք կարողանում ազատվել տասնամյակներ շարունակ, եւ որի պատճառով երկիրն այնպես էլ չկարողացավ ոտքի կանգնել:

Դիմում եմ նախկին կառավարող կուսակցության՝ «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչներին, ովքեր չեն եղել այն զայրացուցիչ հանցավոր համակարգի մի մասը, որի ձեւն ու էությունը արդեն բոլորի համար ակնհայտ է. առաջիկա նախագահական ընտրություններն օգտագործեք անօրինականությունից սահմանազատվելու համար եւ որպես արժանավայել քաղաքական ապագայի շանս: Ոչ ոք մեզանից չի պահանջում հանրորեն ներողություն եւ ապաշխարանք՝ դա ձեզ կպահանջվի սեփական խղճի եւ Աստծո առջեւ: Աշխատեցեք անկեղծորեն բացատրել վրաց ժողովրդին, թե ինչ տեղի ունեցավ եւ ինչու տեղի ունեցավ: Դա հարկավոր է ոչ միայն ձեզ, դա հարկավոր է երկրին: Դուք սեփական փորձով բոլորին լավ ցույց կտաք, թե ինչպես անվերադարձորեն ջուրն էին թափվում հայրենիքին ծառայելու բոլոր փորձերը, երբ նույն ժամանակ ամրապնդվում էր միանձնյա կառավարումը, հայտարարվում ճշմարտության մենաշնորհի, իշխանությունը դուրս էր գալիս օրենքի շրջանակներից եւ հետապնդում այլախոհությունը: Կառավարությունը կանի ամեն ինչ, որպեսզի ձեզ ընձեռվի լիարժեք ընտրարշավ անցկացնելու հնարավորություն: Մնացածը պետք է որոշի վրաց ժողովուրդը:

Դիմում եմ դատախազությանը եւ ոստիկանությանը. բացի հստակորեն փաստարկված ծայրահեղ դեպքերից, ձեռնպահ մնալ ազատության օրինական սահմանափակումից եւ հանցագործություններում մերկացված այն անձանց կալանելուց, ովքեր ակտիվորեն մասնակցում են նախագահության թեկնածուների նախընտրական քարոզարշավին: Մեզ համար առաջնություն է՝ դատյալների նստարանին նստեցնել բոլոր մեղավորներին, սակայն նախագահական ընտրությունների ժամանակ առավել բարձր առաջնություն է քաղաքական ազատության ապահովումը: Ընտրություններում դատախազը եւ դատավորը ժողովուրդն է, ու ժողովրդի ազատ ընտրանքը պետք է որոշի, թե այսօր ով ինչպիսի վստահություն ունի, եւ ով ինչպիսի հեռանկար ունի ապագայում:

Դիմում եմ լրատվամիջոցների ներկայացուցիչներին. ժուռնալիստական էթիկայի բարձր ստանդարտներին համապատասխան, օբյեկտիվորեն եւ անկողմնակալ կերպով հասարակայնությանը ներկայացնել լրիվ եւ հավասարակշռված տեղեկատվություն նախագահության թեկնածուների նախընտրական քարոզարշավի մասին: Այդ գործընթացն ակնառու կերպով ցույց կտա նաեւ այն, թե որ հեռուստաընկերությանը, թերթին կամ լրագրողին է հաջողվում օգտվել կառավարության ճնշումից ազատված ԶԼՄ-ների բարիքներից, եւ ով է գերադասում մնալ քարոզչության գործիք:

Դիմում եմ միջազգային կազմակերպություններին, բարեկամական երկրների դիվանագիտական առաքելություններին, միջազգային եւ տեղական դիտորդական կազմակերպություններին. այսօրվանից սկսած, հնարավորինս առավել թվով ձեր որակյալ դիտորդներին ընդգրկեք ընտրական գործընթացի մոնիտորինգի մեջ եւ ժամանակին մեզ ներկայացրեք ձեր դիտողություններն ու խորհուրդները:

Համոզված եմ, որ գալիք նախագահական ընտրություններում արժանավայել հաղթանակի կհասնի արժանավայել թեկնածու, իսկ պարտվածները համոզված կլինեն, որ իրենք, նույնիսկ ազնիվ պայքարում պարտությամբ, իրենց ավանդն են ներդրել երկրի ժողովրդավարական զարգացման գործում»,- հայտարարել է Բիձինա Իվանիշվիլին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՏԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ




*Հուլիսի 4-ին, «Օրենսդրական տեղեկատու» կայքում հրապարակվելուց հետո, ուժի մեջ մտան Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունները:*

Խորհրդարանի հավանությանն արժանացած եւ արդեն օրենքի ուժ ստացած փոփոխությունների համաձայն, Վրաստանում 18 տարեկանից բարձր քաղաքացիների համար աշխատանքային օրը, շաբաթական հինգ աշխատանքային օրում չպետք է գերազանցի 40 ժամը, 16-ից մինչեւ 18 տարեկանների համար՝ 36 ժամը, 14 տարեկանից բարձր տարիք ունեցողների համար՝ 24 ժամը: Արտաժամյա աշխատանքի համար վճարումը իրականացվելու է ըստ աշխատաժամերի: Գործատուի եւ աշխատողի միջեւ պայմանավորվածության դեպքում, արտաժամյա աշխատանքը կարող է փոխհատուցվել լրացուցիչ արձակուրդով:

Արտաժամյա է համարվում ցանկացած աշխատանքը, որը աշխատողը կատարում է գործատուի համաձայնությամբ, եւ որի տեւողությունը շաբաթվա հինգ աշխատանքային օրերին գերազանցում է 40 ժամը:

Արտաժամյա է համարվում նաեւ տոնական օրերին կատարած աշխատանքը:

Օրենսգրքի նախորդ խմբագրությամբ աշխատանքային ժամերը սահմանվում էին միայն աշխատանքային պայմանագրերով: Դրանում չէր սահմանված 18 տարեկանից փոքր անձանց աշխատանքի առավելագույն ժամանակը, բացի այդ, առանց նրանց ցանկության, արգելվում էր նրանց աշխատանքով ծանրաբեռնելը գիշերային ժամերին:

Ինչ վերաբերում է հանգստին, ապա վճարովի արձակուրդը պետք է լինի առնվազն 24 աշխատանքային օր: Ընդ որում, արձակուրդը կարող է երկարաձգվել պաշտոնական ազատ օրերին կատարած աշխատանքի հաշվին: Տարեկան մեկ անգամ, աշխատողի պահանջի դեպքում, գործատուն պարտավոր է վերջինիս հաշվին նրան տրամադրել արձակուրդ, առնվազն 1 աշխատանքային օրվա ժամկետով:

Ծանր, վնասաբեր կամ վտանգների հետ կապված աշխատանքի դեպքում, գործատուն պարտավոր է աշխատողին տրամադրել վճարովի լրացուցիչ արձակուրդ առնվազն 15 աշխատանքային օրվա տեւողությամբ:

Խորհրդարանի կողմից հաստատված աշխատանքային նոր օրենսգրքում նորամուծությունն այն է, որ աշխատանքային պայմանագրերում պարտադիր կարգով նշվելու են աշխատանքը սկսելու ժամանակը եւ դրա տեւողությունը, աշխատանքային ժամանակն ու հանգստի ժամանակը, աշխատանքի վայրը, աշխատողի պաշտոնն ու կատարվելիք աշխատանքը, վարձի չափն ու դրա հանձնման կարգը, արտաժամյա աշխատանքի վճարման կարգը, վճարովի եւ չվճարվող արձակուրդների տեւողությունը:

Փոփոխությունները նախատեսում են նաեւ փորձառնական ժամանակահատվածով աշխատողների վարձատրության կարգը, ընդ որում՝ փորձառնական ժամանակահատվածը չպետք է գերազանցի վեց ամիսը:

Աշխատանքային պայմանագրի պայմանները փոխելու դեպքում, գործատուն պարտավոր է այդ մասին տեղեկացնել աշխատողին: Պայմանագրում փոփոխություններ չեն կատարվում աշխատավայրի փոփոխման դեպքում, եթե աշխատողը նոր աշխատավայր գնալ-գալու համար ճանապարհին ծախսում է ոչ ավելի քան 3 ժամ, եւ դա կապված չէ մեծ ծախսերի հետ: Նաեւ աշխատողին բավական է բանավոր զգուշացնել աշխատանքը սկսելու եւ այն ավարտելու ժամանակի փոփոխման մասին, եթե խոսքը վերաբերում է ոչ ավելի, քան երկուսուկես ժամին:

Վերոնշյալ փոփոխությունները կիրականացվեն միաժամանակ, ուստիեւ գործատուն, աշխատանքային նոր օրենսգրքից ելնելով, ստիպված աշխատանքային նոր պայմանագրեր է կնքելու աշխատողների հետ:

Աշխատանքային պայմանագրի խզման դեպքում, գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին տեղեկացնել 30 օր շուտ, գրավոր տեսքով: Միաժամանակ, գործատուն նշելու է աշխատանքային պայմանագրի խզման պատճառը: Ընդսմին, գործատուն նաեւ պարտավոր է աշխատողին փոխհատուցման կարգով վճարել երկամսյա եւ ոչ թե մեկամսյա աշխատավարձը, աշխատանքային պայմանագրի խզումից 30 օրվա ընթացքում: Եթե վերոնշյալ պայմանները չեն կատարվում, ապա աշխատողը իրավասու է գործատուի հետ հարցերի կարգավորման համար դիմել դատարանին:

Աշխատանքային նոր օրենսգրքում փոփոխություն է կատարվել նաեւ հղի կանանց վերաբերվող մասում: Ինչպես հաղորդել է Վրաստանի արհմիությունների փոխնախագահ Գոչա Ալեքսանդրիան, այն վերաբերում է դեկրետային արձակուրդին: Նա նշել է, որ եթե նախկինում գործատուն կարող էր հեռացնել հղի կնոջը, ապա այժմ նա այդպիսի իրավունք չի ունենա:

«Երբ աշխատակցուհին գործատուին ներկայացնում է տեղեկանք հղիության մասին, ապա այդ օրվանից մինչեւ դեկրետային արձակուրդից վերադառնալը, մնում է անձեռնմխելի: Այդ ժամանակամիջոցում ոչ ոք իրավունք չունի նրան հեռացնել աշխատանքից»,- հայտարարել է Գոչա Ալեքսանդրիան:

Ավելացնենք, որ աշխատանքային օրենսգրքում կատարվել են եւս մի քանի ուղղումներ՝ կապված կանանց իրավունքների ընդլայնման հետ:

***ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ***

ՎԱՐՉԱԿԱՆ

# ՆՎԱԶԵԼ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ

*Խորհրդարանի քննարկմանն են ներկայացվել «Վարչական իրավախախտումների օրենսգրքի» փոփոխությունների օրինանախագիծը:*



Ներկայացված փոփոխությունների համաձայն, ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների համար նախատեսված տուգանքների չափերը եւ տուգանքները ժամանակին չմարելու կապակցությամբ նախատեսված պատժամիջոցները նվազեցվում են, իսկ տուգանքի մուծման ժամկետը երկարաձգվում է:

Փոփոխությունների համաձայն, վարորդի կամ ուղեւորի կողմից անվտանգության ամրագոտու չամրացման դեպքում, վարորդը 40 լարիի փոխարեն, հետայսու տուգանվելու է 20 լարիով: Նույն կարգով, կվադրոցիկլով, հեծանիվով կամ տրանսպորտային այլ փոխադրամիջոցով քաղաքի տարածքում գտնվող պուրակներում, զբոսայգիներում կամ այգիներում տեղաշարժվելու կանոնների խախտման դեպքում, նախկին 20 լարիի դիմաց, տուգանքը կկազմի 10 լարի: Մեկ տարվա ընթացքում նույն իրավախախտումը թույլ տալու դեպքում, տուգանքի չափը 50 լարիի դիմաց նվազեցվել է մինչեւ 25 լարի:

Ներկայացված փոփոխություններն առնչվում են նաեւ վարորդի կողմից արագության գերազանցման կամ լուսանշանի արգելքների խախտման դեպքում: Արագությունը թույլատրելիից 15 կմ/ժամից ավելի գերազանցելու դեպքում, վարորդը, նախկինում նախատեսված 100 լարի տուգանքի դիմաց, կվճարի 75 լարի: Այն դեպքում, երբ արագությունը գերազանցելու ընթացքում առաջանում է վթարային իրավիճակ, կամ այն հանգեցնում է երթեւեկության արգելակման, վարորդը 250 լարիի փոխարեն, կտուգանվի 150 լարիով:

Նվազեցվում են նաեւ մայթերին մեքենաների կանգնեցման, երթեւեկությունը սկսելու կամ տեղաշարժի կանոնների խախտման համար նախատեսված տուգանքները: Նման դեպքերում, վարորդը 50 լարիի փոխարեն, կտուգանվի 25 լարիով:

Կարգավորիչի կամ լուսանշանի տակ անցնելու կանոնների, առաջնահերթային («Զիջիր ճանապարհը», «Առանց դադարի երթեւեկությունն արգելված է») կամ արգելող (Մուտքն արգելված է», «Երթեւեկությունը արգելված է») նշանների պահանջը անտեսող, շրջանցելու, խաչմերուկների, երկաթուղային գծերի հատման կանոնները խախտող, շարժման առավելություն ունեցող ավտոտրանսպորտի երթեւեկությանը արգելքներ հարուցող վարորդը, 50 լարիի փոխարեն, հետայսու կտուգանվի 30 լարիով:

Տուգանքի չափը կիսով չափ նվազեցվել է նաեւ հոծ գծի հատման դեպքում: Նման խախտման համար, վարորդը, նախկինում նախատեսված 100 լարիի դիմաց, կտուգանվի 50 լարիով: Տուգանքը նաեւ կիսով չափ նվազում է վերոնշյալ խախտումների կրկնության դեպքում, եւ դրա չափը, նախկինում սահմանված 200-ի դիմաց, ներկայումս նվազեցվել է մինչեւ 100 լարին:

Ճանապարհային կամ արգելակիչ նշանների խախտումը, որը կարող է առաջացնել վթարային վիճակի ստեղծման կամ խցանումների առաջացման կամ երթեւեկության արգելակման, նախկինում նախատեսված 200 լարիի դիմաց, կարող է հանգեցնել 100 լարիի տուգանքի:

Ինչպես նշվեց, «Վաչական իրավախախտումների օրենսգրքի» փոփոխությունների օրինանախագիծն արդեն ներկայացվել է խորհրդարանի քննարկմանը: Այն նախապատրաստել է «Վրացական երազանք-Ազգային ֆորում» խորհրդարանական խմբակցությունը, իսկ նախաձեռնության հեղինակը վերոնշյալ խմբակցության անդամ Թեմուր Մայսուրաձեն է:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***